№ 138 Օգոստոսի 9 (21) 1880 Օգոստոսի 9 (21) № 138

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կօպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այսպէս է միշտ.—Ներքին տեսութիւն. Նամակ Փօթիից. Նամակ Բագուից. Նամակ Կարսից. Նամակ Շամախուց. Նամակ Բոստօվից. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Թիւրքիա. Աւստրո-Ունգարիա. Ֆրանսիա. Նամակ Թիւրքիայից.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Հայրենասէր տիկին.

## ԱՅՍՊԷՍ Է ՄԻՇՏ

—

Ուշադրութիւն ենք դարձնում ընթերցողին «Մշակի» ներկայ համարի մէջ տպված մեր Կ. Պօլսի մշտական թղթակցի նամակի վրա, որի մէջ նա հաղորդում է որ Թիւրքաց Հայաստանի մէջ երևացել են զինաւորված հայերի խմբեր, որոնք սկսեցին յարձակումներ գործել Հայաստանի քիւրդ ցեղերի դէմ, դրդված լինելով վրէժխնդրական զգացմունքից այն բոլոր նեղութիւնների համար, որ կրել են հայերը քիւրդերից։ Նամակը աւելացնում է որ այդ լուրը մեծ յուզմունք պատճառեց Թիւրքաց կառավարչական շրջաններում և հայոց խնդիրը, որ արդէն քանի մի օր է երկրորդական դիրք էր բռնել համեմատելով յունաց և Չէրնօգօրիայի խնդիրների հետ, կրկին իր վրա բոլորի ուշադրութիւնը դարձրեց։

Նամակը հաղորդում է որ հայերը ոչնչացրին արդէն քիւրդերի եօթ գիւղեր։

Այսպէս է լինում միշտ. մինչև որ մի ազգ միմիայն բողոքներ է անում, յայտնում է իր ցաւերը գրաւոր կերպով, Թիւրքաց տէրութեան պէս մի տէրութիւն ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում ազգի տառապանքների վրա, բայց միայն այն ժամանակ սկսում է ուշադրութիւն դարձնել, երբ ազգը իր իրաւունքները սկսում է զէնքը ձեռին պաշտպանել։

Ցաւալի է. բայց այսպէս է. միայն արիւն թափող ազգի վրա Թիւրքաց տէրութեան պէս մի փտած տէրութիւն սկսում է ուշադրութիւն դարձնել։

Ցաւալի է, բայց այսպէս է. միայն զէնքը, արիւնը, բռնի ոյժը, այդ հնացած միջոցները մեր լուսաւորված դարում գին ունեն մի ազգութեան գոյութեան մասին վկայելու համար։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՓՕԹԻԻՑ

—

Յուլիսի 8-ին

Յօգուտ Հայաստանի սովելոց տեղս հանգանակութիւն մը բանալով կարողացայ հաւաքել պ. Յովհ. Թիւրքեանի և պ. Յովհ. Պետրոսեանի աջակցութեամբ 81 ր. խաւրելով սոյն գումարը նուիրատուաց ցուցակի հետ միատեղ խմբագրութեանդ, խնդրեմ հասուցանէք ուր հարկն է, և նուիրատուաց ցուցակը ձեր պատուական «Մշակի» առաջիկայ համարներու մէկուն մէջ տպագրէք ի գիտութիւն նուիրատուաց.

Յովհ. Պետրոսեան 6 ր., Ս. Քոմարիձէ (վրացի) 1 ր., Ղամբարով, Ավճեան 5 ր., Յար. Թիւրքեան 3 ր., Մ. Մաղլըմեան 10 ր., Մ. Զէյնար-օղլի (տաճիկ) 5 ր., Բ. Զարուքելի (յոյն) 2 ր., Յ. Կօթօղլի 2 ր., Բ. Գամիլիատի (յոյն) 3 ր., Բ. Զիմզիրով 1 ր., Յ. Զամիչով 1 ր., Ա. Մազիրով 1 ր. 50 կ., Գարիտ. Գիմիտրի (յոյն) 50 կ., Մ. Տէր-Թաթոսով 20 կ., Գ. Բլիւմբերկ (հրէայ) 3 ր., Գ. Տէր-Օվակիմեան 1 ր. 40 կ., Գ. Ուղունով 1 ր. 60 կ., Գ. Քեսքինեան 5 ր. 50 կ., Կ. Կապունիայ (վրացի) 1 ր., Ի. Կալանտաձէ (վրացի) 50 կ., Պ. Մարիմեան 3 ր., Մ. Գլիճճեան 1 ր., Բ. Շխեանց 1 ր., Յ. Դանիելբեկեանց 1 ր., Մ. Փափիսով 1 ր., Միխայիլա-չվիլի (հրէայ) 1 ր., Հ. Սավրազեանց 3 ր., Ա. Գանջումեան 50 կ., Լ. Կլասոնիայ 1 ր., Ոմն (վրացի) 30 կ, Ա. Մովսէսեան 2 ր., Օգրովսկի 1 ր., Յովհ. Թիւրքեան 5 ր. 20 կ., Ա. Քէօմիւրճեան 5 ր. 80 կ. Գումարն է 81 ր.

Փօստի ծախքը ես վճարեցի, գումարը ընդամենը ութսունըմէկ րուբլի.

Ա. Քէօմիւրճեանց

### ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Օգոստոսի 1-ին

«Մշակը» և Մէլիքզադէն, որոնք յայտնում են թէ նրանց նպատակը չէ կրօնական վէճ բանալու, այնու ամենայնիւ սխալված են լինում այժմ քրիստոնէական ճշմարտութեան պաշտպան հանդիսանալու. թէ որքան ներգործութիւն ունի գաւառների վրա «Մշակի» խօսքը ժողովրդի մոլեռանդութիւնը չափաւորելու նկատմամբ, դա ժամանակով յայտնի կը լինի.

Չը գիտեմ «Մեղուն» ինչի իրան անձեռնհաս առարկայով է պարապում. «Մշակը» յարուցեց ազգային խնդիրը, իսկ «Մեղուն» դարձրեց նրան կրօնական խնդիր. Բայց եթէ այժմ ժամանակ է կրօնական հարցով զբաղվելու, ինչի «Արարատը» լռում է. երևի «Արարատի» խմբագիրը աւելի ազատ գաղափարի տէր է, քան թէ «Մեղուի» խմբագիրը. Այդ վերջինից միջին դարերի աբեղայի թթված հոտ է փչում. Ցաւալի է երբ նախանձի հոգին է խօսեցնում մարդուն և ոչ թէ ճշմարտութիւնը պաշտպանելու ցանկութիւնը.

Երբ որ «Մեղուն» միտք ունի ազգային եկեղեցին իբրև ազգութեան պաշտպան ներկայացնելու, ինչի ինքն յանձն չէ առնում հայոց պատմութեան մէջ նկարագրված իրողութիւնները ժողովելու, այլ հրաւիրում է որ ուրիշները իր համար գործեն.

Մի՞թէ ճշմարիտ «Մեղուն» այնքան տգէտ է, որ Պօյաճեանի ազգուրացութեան մեղը վերաբերում է աւետարանականութեանը կամ բողոքականութեանը. այդ խելքով դատած ժամանակ պէտք է ասենք որ Վասակ ես բողոքական էր, Վեստ-Սարգին էլ, Մեհրուժանն էլ բողոքական էին.

Իսկ ես կասեմ, որ ազգի այլ և այլ մասերի մէջ երկպառակութիւն գցողները «Մեղուի» խմբագրի պէս ազգուրացներն են, ինչ կրօնին և պատկանէին նրանք.

«Մեղուի» պաշտպանութեան գլխաւոր զէնքերը այն հնացած և ժանգոտած բառերն են, որ շատ անգամ կրկնված են դարերի ընթացքում. հայ-բողոքականները փարախն են մտնում, գողանում են, կլանում են, գազաններ են, հրէշներ են, պառակտում են հօտը, ոչխարազգեստ գայլեր են և այլն... Դիցուք թէ այդ բոլորը այդպէս է. բայց ո՞վ է գլխաւորապէս մեղադրելի. Նա որ գալիս է ու յափշտակում, տանում է, թէ նա, որ իր ստացուածքը ամուր չէ պահում, չէ գնահատում իր թանգագին համարված բանը....

Ծառայական, ստրկական ոգի է, որ ուրիշ բան չը գիտէ, բացի լաց լինելուց, աղաղակելուց, գանգատվելուց թէ օտարները կլանում, գողանում, յափշտակում են....

Հայ-աւետարանական

### ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

—

26 յուլիսի

Կարս քաղաքի մէջ և իր գաւառները պատահած մի քանի հրէշաւոր դէպքերի վրա խօսելը առաջայի թողնելով, տեղս գտնված պարսից և հայոց մէջ ներկայիս ծագած խռովութիւնը կուզեմ նկարագրել.

Ամսոյս 13-ին հայ և պարսիկ մրգավաճառները մի չնչին գործի վրա վէճ բանալով, կը սկսեն անպատուել զիրար. Այն միջոցին պարսիկներին մի քանին տեսնելով, որ նոցա համախորհուրդներու գործած անիրաւութիւնները պիտի յայտնվեն և ըստ օրինի պիտի դատապարտուին, կը ստիպուին պաշտպանել իրենց ընկերներին, և հետզհետէ ձայները բարձրացնելով, հայհոյութեամբ և հարուածներով կը զանակոծեն խեղճ հայերին.

Պարսիկները, որ բնականաբար միութիւն կազմող

---

## ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ *)

—

I

Ֆրանսուաղ Ժերարի անունը արժանի է Ալզասի ժամանակագրութեան մէջ յիշվելու.

Ալզասցու ծնգրութիւնը,—դէմքը քառանկիւնի, ծանրահայեաց, չէկ մազերով շրջապատած.

Կապոյտ աչերը գրաւիչ, հանդարտ և հաստատուն են.

Գլխի շարժուածքի մէջ մի տեսակ վստահութիւն, ազնուութիւն կայ, որ զարմանալի է տեսնել ռամիկ կնոջ մէջ, որի համեստ կեանքը դաշտերումն է անցել.

Զարմանքը անյայտանում է, երբ ծանօթանում ես այդ կնոջ անցեալի հետ.

Երեսուն տարեկան այրի էր նա, ունէր չորս մանկահասակ երեխաներ,—մի աղջիկ և երեք տղայ.—Նրա ողջ հարստութիւնը բաղկանում էր Վօգեզների միջնասահմանում գտնվող մի փոքրիկ դաստակերտից, երբ սկսեց մեծ եռանդով աշխատել իր ընտանիքը կերակրելու և իր զաւակները կրթելու համար.

Նա անձամբ սկսեց իր հողի մշակութիւնը և ընդարձակեց այն հաստատուն և հմուտ գործունէութիւնը, որ ալզասցի մշակների բնութեանը յատուկ է.

Նա այն անմշակ, զառիվայր և խորտուբորտ ձորը մէկ ուրախ, պտղաբեր հովիտ դարձրեց. Մացառուտ անտառների տեղ բարձրացան բեղմնաւոր գայլուկ կոչված բոյսերը. Այն տեղերում, ուր առաջ վայրի թուփեր էին բուսնում, նա ցանեց վուշ և ծխախոտ. Այն տեղերում, ուր առաջ մորին, կծոխուրը և վայրի թուփը միախառնում էին իրանց անպտուղ ծղօտները, նա տնկեց խաղողի որթ. Եւ հողը, մանաւանդ այն հողը, որի համար աշխատանք և անդադար հոգացողութիւն է պահանջում, բայց որը երբէք ապերախտ չէ,—այն հողը նրան առատապէս վարձատրեց. Անձնուէր աշխատանքով և խնայողութեամբ արիաջան մայրը հասաւ իր նպատակին.

Նա իր երեք որդիներին այնպէս էր դաստիարակել, որ հայրենիքի օգուտը ամեն բանից գերադասում էին.

Երկու մեծ որդիքը, Saint-Cyr դպրոցի մէջ դաստիարակված, աստիճանաւորներ էին,—Ստեփանոսը հեծելազօրների հարիւրապետ էր, իսկ Կլօդը սպաների լէյտենանտ. իսկ ամենից փոքրը՝ Ֆրանցը իր ուսումն աւարտել էր օրինակելի ֆերմայում. նա էր մնում մօր հետ և օգնում էր նրան հողի մշակութեան մէջ.

Ինչ վերաբերում է նրա մանկահասակ աղջկան, գեղեցիկ Կրիստինային, նա օգնում էր իր մօրը տնային գործերում. Նա զուարթացնում էր տունը իր ուրախ երգերով. Նա հաւանոցի թագուհին էր, իսկ ծաղկանոցի ամենագեղեցիկ ծաղիկը, որի շնորհիւ նրանց դաստակերտը ուրախալի տեսարան էր ներկայացնում.

Այդ չորս զաւակները համարեա պաշտում էին իրանց մօրը և նրա անձնուէր աշխատութեան և սիրոյ փոխանակ մատուցանում էին փոխադարձ սէր և յարգանք. Մէկ խօսքով, այս այն նահապետական ընտանիքներից մինն էր, որպիսին միայն գեղեցիկ և անկեղծ Ալզասում կարելի է գտնել.

Տիկին Ժերարին իր ազնիւ հոգւով ոչ միայն ճշմարիտ ալզասուհի կարելի է համարել, այլ և անվեհեր հայրենասէր. Վաղուց նա ատում էր պրուսացիներին, իբր թէ, ինչպէս նա ասում էր, նրանց ծածուկ չարութեան, կեղծաւոր խորամանկութեան և մանաւանդ նրանց յափշտակութեան համար. Սակայն այդ ոխը չէր տարածվում բոլոր գերմանացիների վրա.

Կրիստինան ջերմ սրտով սիրում էր մի երիտասարդ վիւրտենբերգցի, որ մերձակայ գործարանի պաշտօնեայ էր, և որը նրա հետ կիրակի օրերը երաժշտութեամբ էր պարապում. Տիկին Ժերարը հաւանութիւն էր տալիս այդ սիրոյն.

Երկու սիրող սրտերը նոր էին նշանվել, երբ յանկարծ յայտնվեցաւ, թէ զարհուրելի պատերազմ է լինելու.

Կարլոս Ֆօրմեր պիտի մեկնէր վիւրտենբերգեան զօրքի հետ. Սրտառուչ էր նրանց միաս բարևը. Սիրող աղջկանը թւում էր, որ Կարլոսը գնալով տանում է իր հետ նրա սիրտը.

Ո՞վ կարող էր գուշակել սկսվող պատերազմի հետևանքները.

Տիկին Ժերարը հաւատացած էր, որ Ֆրանսիան յաղթող կը հանդիսանայ, այդ պատճառաւ նա չէր խանգարում խեղճ Կրիստինային հաստատ հաւատարմութիւն պահպանել դէպի իր փեսացուն.

Երբ մարդս յաղթող է հանդիսանում, որքան հեշտ է լինում ներել.

Սակայն թնդանօթների առաջին հարուածները որոտացին.

Վայսենբերգի հարուածը Ալզասին թմրութեան մէջ ձգեց.

Ֆրանսիացիք ուրեմն կարող են յաղթված լինել.

Այդ բօթաբեր լուրը զարհուրեցրեց արիասիրտ կնոջը, որովհետև նրա երկու մեծ որդիքը Մակ-Մահօնի զօրաբաժինների մէջն էին, և չարունակում էին տակաւին պատերազմը.

Օգոստոսի 7-ն էր.

Առաւօտվանից սկսած, թնդանօթը հեռաւոր փոթորկի նման անդադար որոտում էր.

Եւ յայտնի է, որ թնդանօթի իւրաքանչիւր հարուածը անթիւ զոհեր է տանում. Գուցէ վայր ընկնողը, ջարդվողը, սպանվողը մեր սրտի սիրածն է. Նա խոնաւ հողի վրա ընկած է, վիրաւորված,

---

*) Այս վէպը տիկին Լ. Գանիէրի հեղինակութիւնն է և թարգմանված է. «L'offrande par la société des gens de lettres, aux alsaciens et aus lorrains» գրքից.